

Հ Ա Ն Դ Է Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՀԱՅԲ Ի ՀՆԴԻԿՍ ԱՆԴՂԻԱՅԻՈՑ ԵՒ ՀՈԼԱՆՏՍՅԻՈՑ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն

Երկու ինչ յորդոր եղև ինձ յեղուլ զան-
ցըս Հայոց մասին Հնդկաց Անգլիացուոց 'ի
մեր լեզու. մի՛ գի պատիւ արարից պատ-
մադրին, որ խառնէ 'ի նկարագիր կեր-
պարանաց պանդխտութեան մերոյ զվառ
'ի վառ երանգս ազգասիրութեան. և միւս
ևս՝ զի առ 'ի չգոյէ յիշատակարանաց ան-
ցից մերոց 'ի Հնդկիս, մարթիցի սովին հա-
մառօտ տառիւ ընուլ ազգիս զպէտսնոցին:
Խցիւ բերէր սա զանուն արգոյ պատմա-
գրին և զգրոցն զթուական. զի երկոքին
խսկ չեն 'ի միջի: Այլ յականարկութեանց
անտի ելանէ զեղչկալն թուական 1874. յո-
րում՝ գրեցաւն 'ի Հայկազնէ անգլիերէն 'ի
վերծանութիւն Անգլիացուոց թէ արդեօք
և ոմանց 'ի Հայոց Հնդկաց, որ ոչ ևս լսեն
զբարբառ Հայրենեաց. զի են են իսկ այն-
պիսիք:

Ի գաղթականս ազգաց համակրօնից՝
հզօրն զանգօրն կլանէ, եթէ կենդանի խո-
սիցն խտրիք ոչ կրճիմն 'ի միջի արձանա-
ցին: Իբր ոչ եթէ այլաձևէ ազգախառնու-
թիւն չէայն 'ի Յոյն կամ գնդն 'ի Հրեայ,
զի անյեղի են համագոյցիցս բունք և բերք,
այլ ստեղծանէ, զի միասացիք թէ եղծանէ,
ժողովուրդ ինչ կիսամասնեայ և օտարա-
խորթ. որում՝ 'ի տարափոխիկ յաղողու-
ծոց չիք 'ի կարկատուն ազգարանութեան
անդ մասն ինչ նախանձնի, մինչև գիշեր
ժամանակաց ծածկեացէ զնա համայն: Եւ
ապա զի՛նչ. . . :

Հայքս առ հարկի անիշխանութեան մե-
լոյ և բռնաւորութեան օտար իշխանաց՝
պանդխտեալ յոլորտս երկրի, յարդիւնս
անձմբ դարձեալ առհորիկ զիմաստ առա-
ծին: Ուր ինձ բարիք, անդ հայրենիք: Սա-
կայն առինչ իցէ 'ի խորթ անդ հայրենիս
ապախտ առնել և զբարբառն հարազատ:
Հիմ ամուսինք մեր այլադինք մկրտեացն
զմեզ յիւրեանց լեզուս, և ոչ մեք զնոսա
'ի մերս, թէ չիցէ յիւրն կալ իւրաքանչիւր:
Եթէ ոչ խղճեմք 'ի խնամութենէ բարգա-
ւաճ զրաջեաց համակրօնից, և անդէսլ

համարիմք խղճել՝ ուր եկեղեցիք այլադե-
զուք նովին անճառահրաշ պատգամաւ
զնոյն Քրիստոս քարոզեն, եթէ 'ի պիտո-
յից, ասեմ, դամք 'ի կենակցութիւն նոցա,
և 'ի կենակցութենէ յազգակցութիւն, որ
կարիք, որ սպառնալիք, թէ մանաւանդ
որ ցնորք կուիցեն զմեզ անժառանգել զա-
ւանդս հարց և սերմանել անձանց արհա-
մարհանս: Անազգի է որ անգրիտանայն զազգ
իւր և զեղեռ: Միթէ Հայն փառունակ չիցէ
յաւէժ զուգափառաց հանուրց համապա-
պատիւ. և կամ անփառունակն իսկ՝ գե-
րազոյն քան զանազգիք հրաշափառ: Եւ ո-
րով փառստի օճան առնուցուն, որք այլ-
ազգն խորհիցին: Ուսանել ուսցուք զազ-
գի ազգի լեզուս, որ ըստ բարեձև դաս-
տիարակութեան դարուս՝ 'ի պարտուց հա-
մարի իցեն, այլ գէթ 'ի պատիւ բարոյակա-
նին մի զմերն անգրիտասցուք:

Այլ անհոգութիւն՝ յաճախէ, աւանդ,
զողբերգութիւնս 'ի պատմութեան մարդ-
կան. և տէս մեզ Հայք՝ 'ի Հնդկիս Բրիտա-
նաց յաւելուն օրինակ: Եւ ընդ Հայս 'ի
Հնդկիս Նեորմադաց զի՛նչ լինիցի. . . :
Տաց 'ի վերջ թարգմանութեանս զգուզ-
նաքնայ ծրագիր բնակութեան նոցա անդր,
որով սպաս հարկանիցի հարցասիրութեան
հեռաստանեայց: Այլ ո՛ր տայր հանճարեղ
հայրենասիրաց մերոց 'ի կրկին իսկ 'ի Հըն-
դիկս փորձել մանաւանդ անազան քան
բնաւ իսկ ոչ, և նորոգել զնախանձ ազգա-
սիրութեան և զիմացութիւն օգտի նորին
'ի միտումս տարաշխարհիկ օտարութեան:
Այս լիցի նոցա 'ի փառս և մեզ 'ի լրումն
մաղթանաց:

Գ. ԽԱՅԻԿ. Ա. ԹՈՎԱՄԱՆԸ

Ի Սամարանդ

Ի Ճաւա

31 Դեկտեմբերի 1879

ՀԱՅԲ Ի ՀՆԴԻԿՍ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

Այսպիսով է՛ի պատմական յիշատակաց թէ՛ երբ ստուգիւ մուտ գտին 'ի Հընդիկա Հայք: Ըստ պատմութեան Հայոց յամաց իբր երկուց հազարաց հետէ ոչ գաղարեաց երթեակ ընդ աշխարհս իւրեանց և Աղուանից: Սակայն ոչ սակաւք 'ի Հայոց բնականային մերձ յարքունիս Մոնղոլաց անդ ուրեմն 'ի վեշտասան դարուն. այն ինչ իշխէր Հընդիկաց մեծն Աբբար, և չև տեառն թովմայ Հոռովեան բանազնաց լեալ յամի 1615 յարքունիս Դելհեայ հրամանաւ առաջնոյ Յակովբայ արքայի Անգլիացւոց. թէպէտ անգիտանամ թէ՛ յանգլիացի պատմաբանից ակնարկեալ իցէ ուրուք 'ի հաւաստիս յայս արձանագրաց, զոր ցարդ իսկ ընթեռնուլ է յոմանս 'ի շիրմաց Հայոց ամփոփելոց յառաջ ևս քան զդարս երիս՝ 'ի վաղեմի ուրեք գերեզմանատան յԱգրա քաղաքի: Եթէ 'ի Հայաստանէ ընդ երկիրն Աղուանից գաղթեալ էր նոցա 'ի Հընդիկա, կամ թէ նախ ընդ ծոց Պարսից անցեալ յարևմտեան Հնդկիս, երթեալ էր ապա անտի յարքունիս մեծացն Մոնղոլաց, հրապուրեալ 'ի համբաւոյ մեծաշուք պայծառութեան նորին, զայն ասել ոչ ունիմք: Է ստոյգ զի չև մխտալ Անգլիացւոց 'ի վաճառակցութիւն Հընդիկաց, բնակէին Հայք 'ի կողմանս կողմանս աշխարհին, պարսպեալ խաղաղաւտ 'ի պաճարանս վաճառաչահութեան, և պատսպարեալք հրովարտակօք մոնղոլ իրքնակալաց: Յաճախեալ էր բնակութիւն նոցա 'ի Մուրատ յերբեմն շահաւէտ քաղաքի Հնդկաց, 'ի Մադրաս, 'ի Կալկադա, 'ի Չիլրա առ Հուզլի գետով, 'ի Սէդաբադ մօտ 'ի Մուրիդարադ և 'ի Դաքա, և ամենայն ուրեք թուի յաջողեալ նոցա, և միեւրեալ զմեծութիւնս ընդ: Չնախկին ակնարկութիւն 'ի հաղորդութիւն Հայոց ընդ Լնկերութեան Արեւելեան Հըն-

դկաց, այս է ընդ ազգի Անգլիացւոց, գտանեմ յերրորդում հատորի Տեսուքիսն Դելի Կալիսն իրաց անուն մատենին. զոր յամի 1782 'ի լոյս եհան Բալսէտ 'ի Լոնդոն: Յամի 1688 'ի 22 աւուր ամսեան յունիսի թուի ելեալ հրովարտակ, և կամ զի տպաւորագոյն ասացից, ուխտ կուեալ ընդ Նախարար և Լնկերութիւն վաճառականաց Լոնդոնայ, որ շահակիցք էին արեւելեան Հընդիկաց, և ընդ Հայս 'ի ձեռն երեսփոխանի նոցա խաջէ փանուս ֆալանթար անուն ուրումն ականաւոր վաճառական յորջորջելոյ, ըստ պայմանաց ուխտիս ներեալ էր Հայոց ըստ կամի բնակել և առնել շահավաճառ 'ի Հնդկիս, և վայելել իսկ 'ի նախամասնութիւնս շնորհեալս Անգլիացւոց: Աւասիկ առաջին և կարևորագոյն պրակ նշանաւոր հրովարտակին:

« Նախարար և Լնկերութիւն վաճառականաց Լոնդոնայ, որ շահակիցք են արեւելեան Հնդկաց, առ ամենեւին, որոց գիրս այս հասցէ, ողջոյն:

Եւ զի ազգ եղև մեզ 'ի ձեռն փոխանակի նախարարիս Յետալայ Կիլդեան իշխանային թէ՛ յետ յերկար խորհրդակցութեան ընդ խաջէ փանուս ֆալանթար անուն հայ ականաւոր վաճառականի, բնակելոյ յիսպահան քաղաքի Պարսից, ևս և ընդ Յովհաննու Կարդեան ասպետի Լոնդոնայ, առաջարկեցաւ նմա 'ի նոցանէ բաղումին յաղադս Հայոց 'ի ձգել զվաճառս նոցա ըստ մեծի մասին 'ի Հնդկիս և 'ի Պարսս, և անտի յերկրէս Անգլիացւոց՝ յերրոպա, որ յաւելուլ յաւելուցու ըլմուտս մաքսից տեսուն արքայի, և ըլնաւարկութիւն ազգիս, եթէ ընկալցին Հայք յԼնկերութենէս օճանս և խրախուսանս 'ի չրջել գնախնի անցս վաճառաց իւրեանց յերրոպա: Եւ մեք յար յօժար 'ի յորդել և 'ի յորդորել

զել և զմուտ վաճառուց և նաւուց հա-
սարակաց այսր պետութեան, կշտեալ
քալ զվաճենայն առաջարկութիւնս խըն-
դրոյն, արժան համարեցաք հաւանել և
սահմանել օրինակ զայս :

Նախ. — Զի լիցին Հայոց այժմ և
յաւե՛մ հաւասար բաժին և օգուտ ա-
մենայն նպաստից, զոր մատոյց ընկե-
րութիւնս այս, և կամ մատուցէ յայսմ
հետէ որում և է ումբք յԱնգլիացւոց,
որ ի խնդիր շրջիցին բախտի, կամ ի
տուրեւառ վաճառաց :

Երկրորդ. — Զի լիցի նոցա հանա-
պագ յայսմ հետէ լի ազատութիւն դար-
ձադարձ առնելոյ ի Հնդկիս նաւուք
ընկերութեանս, դրամեալ զնոյն ծախս
նաւուց որպէս ամենայն ազատորեար :¹

Երրորդ. — Զի ներեալ է նոցա բը-
նակել յամենայն քաղաքս, ի դաւառս
և ի պահակապանս ընկերութեանս
ի Հնդկիս. գնել և վաճառել զտունս
և զվիճակս երկրի. ելանել յամենայն
բարձս և յաւագութիւնս արքունի ըստ
օրինի բնիկ Անգլիացւոց, և հանա-
պագ պաշտել համարձակ զկրօնս իւ-
րեանց : Եւ մեք ազգ առնեմք յայսմ
տառի զի ոչ կայցուք ի սպասու մե-
րում նախարար զոք, որ խռովիցէ իւրք
և կամ խորիցէ ինչ ի բնաւից նախա-
մասնութեանց զոր սովաւ մատուցա-
նեմք նոցա. այլ և մի հարցն հարկս
նոքա այլազգ և կամ առաւել քան
զբուն Անգլիացիս :

Չորրորդ. — Զի լիցի նոցա նաւել
ամենայն ուրեք ի Հնդկիս, ի ծովս
հարաւոյ, ի ճենս և ի Մանիլայս ա-
մենայն նաւուք. և վաճառաչահի լի-
նել ի բոլոր սահմանս ընկերութեանս
ըստ պայմանաց, մաքսից և ծախուց
նաւուց հանգոյն անգլիացւոյ ազատի :

Եայմի հրովարտակի ձեռնազիր ար-
կին բենիկամին նախարար, Գետու փո-
խանիկ նախարարի և այլ դրանիկք
երեք : Զոյգ ընդ ամին տուաւ միւս այլ
հրովարտակ, որով ոչ միայն պատասպա-

րէր պետութիւն երկրին « համարձակ
պաշտօն կրօնից Հայոց », այլ և հաւա-
նէր « հանել նոցա զվիճակ գետնոյ ի
կառոյցս եկեղեցւոյ ի սպաս Բարձրե-
լոյն ըստ նոցին տարազու, անդէն ընդ
կալ նոցա ուրեք քառասուն կամ աւելի
թուով ի պահակապանս, ի նահանգս
և ի քաղաքս ընկերութեան արեւելեան
Հնդկաց » :

Ըստ զօրութեան այսց հրովարտա-
կաց, որ հաւանեալ եմ թէ չեղոն յերկ-
բայս երեք, և կամ ոչ եղձն ինչ ու-
րեք, կալան հանապագ Հայք լիով զի-
րաւունս իւրեանց ի վայելս նախամաս-
նութեանց հանգիտապատիւ Անգլիա-
ցւոց ի Հնդկիս. — Ոչ ևս խօսք լինին
ապա ուրեք զհաղորդութենէ Հայոց
ընդ ընկերութեանս մինչև յամն 1715,
յորում, ասէ Բալէս, ի Հատորն առա-
ջին, յէջ 61. « Հասու լեալ ընկերու-
թեանս կասկածաւոր կայից կալուա-
ծոց իւրոց ի բենգալ և այլուր, արձա-
կեաց յարքունիս Դելհիայ պատուի-
րակս երկուս երեւելիս, զոմն Յովհան-
նէս Սուրնամ անգլիացի, և զմիւս ոմն
Խալէ Սերհանդ վաճառական Հայ մե-
ծահռչակ, խնդրել զփոխարէնս ֆեա-
սուց անցելոց, զառհաւատչեայ ընդ-
դէմ զրկեանաց հանդերձելոց, զնախ-
նի նախամասնութեանց ընդարձակու-
թիւն և զյուրվից ևս նորոց յաւելուած,
և մանաւանդ զդոյզն ինչ երկիր, ուր
և կամիցի ընկերութիւնս կառուցանել
իւր գործարան » :

Այսպիսի բարբառ ցածուն էր Ան-
գլիացւոց քառասուն եւթ ամաւ յա-
ռաջ քան զպատերազմ Պասեսայ, որոյ
յաղթութիւն ամենատեարս արար
զնոսա ի բենգալ : Երբդիւնս եկն պատ-
գամն բովանդակ ըստ նմին պատ-
մազրի, զի ասէ. « Սովին պատգամա-
ւորութեամբ ընկալան Անգլիացիք
զհրովարտակն մեծ, որ ապահարկեացն
զվաճառս նոցա յինքնակալութեան
Մոնգոլաց, մուրհակաւ իւրք վճարելոյ
ամի ամի զբիւր մի հառափի գրամա-
կչուց » :

Նախամեծար լինել ուրուք ի Հայոց

¹ Freeman. Այսպէս գգուեն զանձինս Ան-
գլիացիք :

քան զմեծատուն ոմն հնդիկ 'ի գնալ
ընդ Սուրնամայ յարքունիս Դեհհեայ,
յայտ իմն առնէ զի Հայք առ փարթա-
մովեանն և փառաց մեծազօրք էին
յայնժամ 'ի Բենդալ, և մեծարոյ Ան-
գլիացոց և Հնդկաց առ հասարակ:
Միաձայնի յայս և Բալէտ 'ի պատմա-
բանել իւրովայսպէս. « Հայք » որ միշտն
վաճառականք անուանիք եղէն 'ի Հըն-
դիկս, կալան ընդերկար բազում բնա-
կութիւնս 'ի Բենդալ, ևս առաւել 'ի
Սէդաբատ: Յակաստանի կայր շահա-
վաճառ նոցա հրովարտական Մոնղո-
լաց, որով սահմանէր և սակ երկուց
նշանաւոր աղխամաղխից 'ի վաճառաց
նոցա, իմո կտաւոյ և ապրիլմի, երեք
և կէս սոս հարիւր:

Եւտ հրովարտակի մեծացն Մոնղո-
լաց, զորմէ բանք եղեն, Անգլիացիք,
Հայք և այլ աղինք զոյգ զբաղէին 'ի
Բենդալ զամս բազումս 'ի բազմանշահու-
թիւն վաճառաց և նախանձընդդէմ
լանից, ոչ իւրք բարեկամութեան նոցա
ողմկեալ, մինչև յամի 1756 բնաւ իսկ
կերպարանափոխ եղեն իրք 'ի դիպաց,
և հիմն արկաւ բրիտանիկ պետութեան
'ի Հնդկիս:

Սուրաշա Դովլա պատանի դեռ տյն
ինչ քստնամեայ, պայտաշտեալ զհաւ
իւր Ալիվէրդի խան, որ իբրև կուսակալ
Մոնղոլաց իշխեալ էր 'ի Բենդալ, 'ի Բե-
հար և յՈրիսա, յարոյց պատերազմընդ
զէմ Անգլիացոց. և չուարարեալստուար
բանակաւ 'ի կալիկաթա, յարձակեցաւ
յամրոց անդր, ուր ապաստանեալն էր
նոցա, և հառ զայն յետ տկար դիմա-
մարտի: Ոմանք 'ի պարտելոց անտի
փախեան 'ի նաւս որ կային 'ի գետի
սնդ, որոց վարեալ ընդ ալիս, խաղա-
ցին 'ի խորս, այլք անկան 'ի ձեռս յաղ-
թականին: Եւ յայտ իսկ է սոսկալի օր-
հաս յողունց 'ի կալանաւորաց անտի
ողբերգեալ 'ի խաւարին խոռոչին 'ի
կալիկաթա: Իսկ որ 'ի նաւան ապաստան
եղէն, իջին և թաքեան ուրեք 'ի փոլ-
թա իրր քառասուն փարսախաւ հեռի
'ի կալիկաթայ: Հարկ եղև նոցա առ 'ի
չգոյէ պարենի տանել դժնգակաց, այլ

յօդնութիւն եհաս նոցա մարդասէր և
բարեխնամ ոմն վաճառական հայ Պե-
տրոս Եարովթիւնեան. յղեալ երբեք եր-
բեք զանխուլ 'ի պէտս նոցա մակոյկս
նպարակաւորս: Այս Պետրոս Եարով-
թիւնեան բնիկ Պարսից, նոյն ինքն է,
զոր Որմէս 'ի պատմութեան Հնդկաց
« Հայն Պետրոս » կոչէ, և առեալ, ասէ,
ապա յԱնգլիացոց առ Քլիւէ իշխա-
նաւ 'ի պաշտօնեայ հաւատարիմ խօսել
ընդ Միհրջափարայ և Ոմիսնդայ 'ի
հնարս արկանելոյ յիշխանութենէ
զՍուրաշա Դովլա, որ անկան իսկ 'ի
պատուոյն 'ի մորտին Պլասեայ: Պե-
տրոսի էր եղբայր Գրիգոր ոմն, ծանու-
ցեալ 'ի պատմութեան Հնդկաց Գոր-
գին խան արեւելեան յորջորջանօք, այր
նշանաւոր անկակից հանճարով, որ 'ի
վէպս ամացն այնոցիկ երբր դէմս ոչ
ինչ անաւագ, և մարթէր և ևս պայ-
ծառանալ նմա առ յաղթութեամբ
Անգլիացոց 'ի Բենդալ, եթէ սուսեր
դաւաճանի ուրուք 'ի բնիկ զօրաց նորս
չէր տարաժամ դաւ արարեալ գերա-
պանծ նահատակութեանց նորին:

Գրիգոր Եարովթիւնեան, ծանօթա-
գոյն 'ի Հնդկիս Գորգին խան անուամբ,
վաճառական էր և բնակեալ զամս բա-
զումս յարքունիս Մուրշիդաբադայ ընդ
յուրովս 'ի գաւառակցաց իւրոց, որ յա-
րեցան ապա 'ի զօրս անդր, զոր յարոյց
և մարզեաց Միհրջափարայ, ընդ որում
արարեալն էր բարեկամութիւն սերտ:
Ի Միհրջափարայ, որ յաջորդեալն էր
Սուրաշայ, հտնին Անգլիացիք առ
ստղիւտ անբաւականութեան նորս
գիշխանութիւն յամի 1760, և եղին ընդ
նորս զհոր նորին զՄիհրջափարայ իշխան
'ի Բենդալ. փոխանակ զի եթող սա 'ի
նոսա նահանգս երիս, զՄիհրջափարայ,
զՉիտագոնդ և զԲրդուան: Միհրջափարայ
կացոյց իւր նոյնհետայն զԳորգին խան
զրանիկ բարձրէց և հրամանատար
ամենայն զօրաց: Թէ զիարդ ելից սպա-
րապետս այս զպարտս բազմաթախանձ
սուագութեան իւրոյ, թողից Մարշա-
նայ ասել: Մարշամն, զոր ոչինչ վարա-
նիմ առ հմտագոյնս ունել անցից Հըն-

զկաց, յուռալնում պրակի պատմութեան իւրոյ զինամոտ յանձանձանաց Միհրդատիմայ գրեալ, ասէ. —

« Միհրդատիմայ բուռն եհար ուժգին 'ի տաժանաւոր պարտա տեսութեան, կարճեալ զբազմաձախութիւն կարգացն արքունեաց՝ երարձ զօրէնս և զընդվայր ծախս բուժանելոյ զարքունի երէս : Խնդրեաց մանրախուզիւ զհամարո հասարակաց, հարկեցուցեալ զաւազանին զգայուել զոր ինչ մեղգայլելան էր նոցա : Ճշգրեալ զվճար հասից, և ուղղեալ զբեկարս արքունի, յաւել 'ի մուտս գանձու գաւառայն երից՝ բիւրս բիւրուց հուսիեաց : Այս հայլայլմանը յայողեցին նմա վճարել համայն զոր պատշաւ պարտէր Անգլիացուց, և ապա դառնայր ամիսիկէր զուշ և զուրուշ 'ի խորհուրդ մեծ, 'ի թափել զանձն 'ի լծոյ նոցա, և 'ի դարձուցանել յազդ իւր զազատութիւն : Փոխեաց զգահ իւր 'ի Մոնղիա, 320 փարսախաւ 'ի բացեայ 'ի կալկաթայ, ուր անտես ամենեկին այնու եռանդեամբ ետ զանձն 'ի հանդերձանս հնարից ինքնօրէն աղիկամութեան, մինչ զի 'ի նուազ ժամանակի քան զամս երկու բաւականանայր ձայն տալ զօրութեան նոցին : Բարեացապարտ այսր արագ յեղափոխութեան սատար եղև բազմաջան հայ ոմն ծնեալ յիսպահան, և Գորգին խան յորջորջեալ 'ի Հնդկիս : Էր նա յառաջագոյն վաճառաւոր կտաւոյ առ Հուզիի գետով. այլ իբրև յանձն եղև նմա հոգ. պաշտաման, 'ի վեր երևեցաւ հանճար նորա ընդարդոյս և ճարտարութիւն ամենահնար : Ի նուազ աւուրս քան զամս երկու կազմեաց նա հեծելազոր 15,000, և 25,000 հետեակազոր, հրահանգեալս ըստ օրինի Անգլիացուց. կառոյց դարձնոց 'ի ձոյլ մեծամեծ հրետից. հրազէնս կռեաց անգլիական նացն դերագոյնս, և մարդեաց զգորսկանն հրազինաձիգ այնպէս՝ մինչև մարթիւ պանծալ նոցա և 'ի վաշտս իսկ Անգլիացուց, ոյ կարօտէր իմիք Միհրդատիմայ 'ի հզօրագոյն գոլքան զԱնգլիացի խան, բայց անխուով պարապոյ սուղ ինչ ևս ամաց » :

Ի վերժանելուրուք 'ի Հայոց զներբող այսքանոյ բազմահմուտ մատենագրի, արժան է նմա պարծել ընդ մարթիւ անգրադիտի ումեք 'ի գաւառակցաց իւրոց, զի անգէտ էր գրոց Գորգին խան և ըստ Մարշմանայ երեմիս տրուպ վաճառական կտաւոյ, կարողութեամբ լոկով բնածին հանճարոյն՝ դումարել և կազմել զօրութիւն յաղթ և մարդիկ, յօրինել ձուլարան հրետից, հրազէնս գործել աղնուագոյնս քան զԱնգլիացուցն այնր ժամանակի, և յաստուղկացոյցանել զյանձանձանս իրաց մեծի գաւառի. և այս ամենայն 'ի սուղ շրջանի երկց եկթ ամաց : Թէ որչափ ինչ տակաւին մնայր առնս մեծի 'ի վճարել եկթ երկայնէր արև նորա յարգուն, զիւրին է 'ի միտ առնուլ. այլ չէր այսմ լինել : Ի յեղյեղուկ անտի գնացից ատենին խորհրդոյ Անգլիացուց, որ գահալիժեացն 'ի վերջոյ զՄիհրդատիմայ, հեռ յուղեալ 'ի նոսա միղղեացն երկուստեք բազում պատերազմունք, յորոց զյետնոյն որ հարաւս յամի 1763 յ2 օգոստոսի 'ի Գերիա, ասէ դարձեալ Մարշման. « Յերկարեաց մարտն ժամս չորս. և ըստ Քլաւեայ, ոչ քաջագոյն երբէք մարտեան զօրք քան զՄիհրդատիմայն : Այսպէս 'ի ճակատու ուրեք մարտին միջամուխ եղին 'ի գունդս Անգլիացուց, և կալան 'ի նոցանէ հրետս երկուս. և յաղթութեան իսկ թուէր հակել 'ի նոսա, այլ տնդրդուն լի պնդութիւն սպայից Անգլիացուց տապալեալ զամենայն դիմակալութիւն, բունադատեաց զվճարմին լրանել ըզհրազէնս իւր և զհամբարս, և նահանջել յԱնգլուանուրա » :

Եթեմեկաւ յետոյ քան զճակատաւ մարտն Գերիայ, մինչդեռ շրջէր զբանակուն Գորգին խան անպահապան, յարձակեալ 'ի նա ուրուք 'ի բնիկ զօրաց, և եհար զնա կարեմէր : Ածաւ սպարապետն խոց 'ի խորան իւր, ուր յետ սակաւ ժամանակի աւանդեաց զօգի : Սա առաջին եղև 'ի Հայս Հնդկաց որ ետ զանձն յարուեստ զինուց. և մեծափառ պայծառացաւ զինուորական հանձա-

րով և ճարտարութեամբ յանձանձա-
նաց :

Թարդի պատմութեան ընդ առաջ
լինի միւս ոմն 'ի Հայոց, որ եմուտ 'ի
զինուորութիւն Մահարաշայ իշխանին
Գուլսերայ : Հանգոյն յողունց էջ 'ի
Հնդիկս և զօրավարն Յակովբ Պետրո-
սեան անինչ 'ի խնդիր բախտի . և մուտ
արարեալ 'ի պետութիւն Հնդիկ իշխա-
նին, ընկալաւ անդ զկարգ զինուորա-
կան, և պարտուցն հաւատարիմ լրու-
թեամբ ել տակաւ մինչև 'ի զօրավարու-
թիւն : Զինուորէին ընդ նովաւ և այլք
բաղումբ 'ի Հայոց 'ի նշանաւոր կարգս
զօրականին : Պատերազմունք Մահարաշ-
պուրայ և Պունեսայ միեալք յամի 1843
առ նախարարութեամբ էլենքուրայ
ընդ Անգլիացիս և ընդ Հնդիկս, դիրե-
տար արարին 'ի սպառ զգօրս Մահա-
րաշայ : Հայոց 'ի Գուլսեր կապտեալ
'ի գործոյ իւրեանց, հալել լինէր եր-
թալ խնդրել զապրտեստ այլուր 'ի Հնդի-
կաւ, թէպէտ և ոչ իբր զօրական : Իսկ
զօրավարն Յակովբ վաղ յետոյ վճարէր
'ի կենաց անցեալ զաւուրբք, թողեալ
կին և ուստերս երկուս, յորոց մին յետ
սակաւու գնայր զհետ հօրն 'ի հանգիստ-
և միւսն գնդապետ Բովհան Յակովբեան
խողխողեցաւ յԱգրա 'ի դաւակցաց ա-
պրտաւթութեանն յուզելոյ յամի 1857 :

Զիղլ է յոյժ զի որ 'ի յետին դարս եր-
կուս եկին և բնակեցան Հայք այլ և
այլ ուրեք 'ի Հնդիկս, ոչ թողին յի-
շատակարանս զվաստակոց իւրեանց,
զտարազուց վաճառաց և զհաղորդու-
թեան ընդ հնդիկ իշխանայս և ընդ
Եւրոպացիս, որ պարագայց ամօք
ոգորէին զիւլ զիրեօք : Մորին աղա-
գաւ անկ է յենուլ յաճախ յաւանդու-
թիւնս հասեալս յազգաց առ մեզ, թէ
զոր դէմս բերին նախնիք մեր յառաջ
և յետոյ քան զտակաւ նուանել Անգ-
լիացոց զՀնդիկս, և զինքնակալել նո-
ցա անդանօր իսպառ :

Բռնադատեալ Հայոց 'ի բռնութենէ և
'ի հարստահարութենէ տաճիկ և պար-
սիկ իշխողաց իւրեանց, մեկնեցան
տարագէմ 'ի հայրենեացն 'ի Հնդիկս :

յորովագունից 'ի նոցանէ զօրով անինչ,
անբարեկամ, անծանօթ և առանց ըն-
ծայութեան : Պարտ էր նոցա բանալ
անդ իւրեանց անցոյ ընդ անձկութիւնս
և ընդ սրտաբեկութիւնս . բայց 'ի կորու-
վոյ բնաբոյս ճարտարութեան իւրեանց
և մեծի աղողակութեան 'ի շահավա-
ճառ, յորում աշխարհաբարոզ բարե-
բանին, ոչ միայն գտին 'ի տար աշ-
խարհին զլուռան ոտից, այլ թէ և փո-
քրաթիւ իսկ էին, պատկառելի և մե-
ծարոյ եղեն Եւրոպացոց և Հնդկաց
միանգամայն : Թուի բնակութիւն կա-
լեալ նոցա նախ 'ի Սուրատ, որ 'ի Հնդ-
դիկս արեմտից, և 'ի Սէդաբադ 'որ 'ի
Բենգալ, և շահավաճառութեան նոցա
ծաղկեալ անդ յոյժ . այլ 'ի սահել ա-
մաց, չընեցան երկաքանչիւր քաղա-
քացն իրք . և յանկանել վաճառակա-
նութեան նոցա և ժուլթեան, պակա-
սեցին տակաւ և Հայք, մինչև հազիւ
տուն ինչ թէ դիպիցի այժմ անդանօր .
եկեղեցեացն կանգնելոց 'ի նոցանէ և
նուիրելոց 'ի պաշտօն Աստուծոյ խոնար-
հեալ յաւերակս և 'ի բոյնս բուռց և
աղաւնեաց :

Ի Մագրաս, ուր երբեմն յաճախաւոր
բնակութիւն նոցա կազմէր ժողովուրդ-
պատկառելի, մեծապատիւ և ընչաւէտ,
գտան խուն մի բարեբաստադոյնք : Ի
վերջ կոյս դարուն յետնոյ և 'ի մուսս
այսորիկ, ապարանք նոցա պայծառ-
գոյնք էին քան զամենեցուն 'ի քաղաքին .
և բազմազուարճ ամարանոցք նոցին, ուր
մեկնէին երեկորին յետ աւուրն վաս-
տակոց, յարգարեալք ամենայն սիւս-
փանօք և պերճանք : Գեր 'ի վերոյ հա-
նուրց փայլէին յայնժամ ազգատոհմք
երկու անդանօր մեծութեամբ ընչից,
պատկառելի զօրութեամբ և երևելի
հանդերձանօք, որով վարէին զկեն-
ցադ Հարք տոհմիցս այսոցիկ եղեն Աղա
Շամիր և Սամուէլ Մուրադեան . Սա-
մուէլս այս կեայ տակաւին, և կեցցէ
յամայր 'ի միտս Հայոց ոչ միայն յԱ-
րեւելս, այլ ընդ ամենայն երկիր : Կտա-
կագրեալ նորա 'ի դասախարակու-
թիւն մանկտոյ ազգին իւրոյ զհուսփիս

վաթառն քիւրուց, յանձն արար զհոգհրիաակին յուխտ Մխիթարայ, որ 'ի վինետիկ, բանալ վարժարան մանկանց անփարթամ Հայոց: Բացաւ վարժարանս 'ի ֆարիզ, ուր յամաց հետէ կըրթին ընտիր կարգաւ հայ պատանիք, յորոց յողովք ելանեն այլ ամի ծաւայել զնսեհ դաստիարակութեան և բարգաւաճութեան, յազգի իւրեանց 'ի մարզս հայաստան և տաճկաստան աշխարհաց: Վարժարանս այս Մուրադեան 'ի սկզբանէ հետէ վայելեաց 'ի շնորհս և 'ի խնամս ինքնակալին Գալլիացուց, որոյ հրամանաւ արըռնին տեսուչ դաստիարակութեան հաղորդէր հանդիսի տարևոր քննութեան աշակերտաց նորին: Հայք 'ի Մագրաս ոչ վերջացան յաւուրս փառաց իւրեանց 'ի բարեմասնութեանց դաստիարակութեան և գիտութեան, այն ինչ դուն ուրեք խորհէր որ 'ի դաստիարակութիւն 'ի Հնդիկս: Բացին կրթարանս և տպարանս, և 'ի լոյս ածին գիրս և լրագիրս 'ի շահ գաւառակցաց: Այլ, աւանդ, անց և այս ամենայն. ժողովուրդն այն, որ երբեմն բազմաթիւ, բազմաղօր և բազմագանձ ճոխանայր, ընծայէ այժմ 'ի տեսիլ եղբրական քանի մի գերդաստանս չքաւորս տաժեալս 'ի գոյից, զոր բարերարը ոմանք 'ի Հայոց թուրք 'ի դարման տնանկաց. և որ այժմ 'ի ձեռս է աւանդապահաց եկեղեցւոյն: Իսկ որք էին 'ի Բուսթայ, վիճակեցան և նոքա նմանավիշտ բախտի: Էր երբեմն զի բնակաւայր անդ ժողովուրդ բազմաւոր, զոյաւոր և բարեբաստիկ, այլ այժմ դուն ուրեք թէ կայցէ տոհմին 'ի լիութեան կամ 'ի բաւականութեան, թէպէտ և պահի տակաւին քահանայ 'ի սպաս հոգեւոր պիտոյից, որոց անդն կան: Է և այլ քաղաքիկ, ուր նախ քան զպարտութիւն Բենգալայ յԱնգլիացուց 'պատաղէին Հայք 'ի վաճառաշահութիւն մեծատարած: Ի Ճիւրա առ Հուգլեւա բնակէր երբեմն հասուած հոլանդացի վաճառականաց, և անդ ոչ սակաւ Հայոց թուի լեալ զամս իբր երկերիւր: Եկեղեցի

նոցա կառուցեալ անդ յամի 1695, երիցագոյն է տաճարաց քրիստոնէից 'ի Հնդիկս բաց 'ի հռովմեական եկեղեցւոյն 'ի Բանդէլ. և կայ տակաւին անխարխար: Այլ ամայացաւ և Չիւրա, անհետացան Հոլանդացիք, անհետ եղեն և Հայք բաց 'ի ծերունեաց ոմանց, որ ղեռ ղեգերին անգր մեկուսի իբր 'ի ձգել զստուեր ժողովրդեան երբեմն բարերաստի:

Աւից արդ ասել ինչ և զԴաքա քաղաքէ մերմէ, որ մերթ հռչակագոյն վաճառանոցն էր արեւելեան Բենգալայ, ուր վաղ ուրեմն բնակութիւն արաբեալ Հայոց, կալան բաց 'ի բազմատարած վաճառականութենէ իւրեանց և զկալուածս մեծամեծս: Այժմ, որպէս մարթի ինձ թուել, զոն աստ իբր 107 Հայք, յորոց 36 արք են, 23 կանայք և 48 մանկունք. և 'ի նոսա

1. Քահանայ
5. Տեառք կալուածոց
3. Վաճառականք
1. Իրաւագէտ
5. Կրպակաւորք
7. Օժանդակք
4. Աղբուրի պաշտօնեայք:

Եկեղեցի նոցա կառուցաւ անդ յամի 1781, հանգանակաւ 'ի Միջայելէ Սարգսեան, յԱստուածատրոյ Գէորգեան, 'ի Խաչկայ Պետրոսեան, 'ի Մարգարայ Պողոսեան և յայլոց ևս, որոց անձանօթ են անուանք, 'ի նմին վայրի, ուր Խաչիկ Մինասեան ետ 'ի կառոյցս նորին կանգնել տնակ յառաջագոյն 'ի հասարակաց աղօթարան: Սակայն հասուած Հայոց 'ի մարզի աստ Բենգալայ երիցագոյն յոյժ գտանի ժամանակաւ, զի զշիրմաւ Աւետիսի ուրումն հայ վաճառականի 'ի Տեսգոնգ գոյ արձանագիր, որ բերէ զթուական 5 Օգոստոսի, 1714:

Ամենայն ուրեք 'ի Հնդիկս, ուր եղեն Հայք, բարգաւաճեալ առ ժամանակ մի, և խրկեացան տակաւ և կամ բարձան 'ի միջոյ: Ի Կալկաթա միայն թուի աճել նոցա բարեբաստագոյն, 'ի հաստի կացեալ մինչև ցարդ, ևստ աշ-

խարհադրին, որ արարաւ յամի 1866, թուեցանքնակիչք՝ ի քաղաքին 377,924, յորոց 703 Հայք էին : Այս թիւ, եթէ ոչ խարիմ, մտ զոյ 'ի ճշմարտութիւն. և թերևս կէս 'ի կէս նուազ էին Հայք յառաջ քան զամս եօթնասուն կամ ութսուն : Բնաւորեալ են Հայք, 'ի բազմանալ ուրեք բնակութեան իւրեանց, նախկին հոգ տանել 'ի կանգնել զտոհմար ուրոյն 'ի պաշտօն և 'ի պահ կրօնից նախահարց իւրեանց : Այս բնաւորութիւն նոցա ազգային 'ի յայտ եկն ականեր և 'ի Հնդկիս. որում վկայեն եկեղեցիք նոցա, որ կան տակաւին, 'ի Սուրատ, 'ի Բոմբայ 'ի Ձիւրա, 'ի Դաքա, 'ի Մադրաս և 'ի Կալկաթա : Կանխեցի ասել թէ բաց 'ի միոյ՝ վաղեմի քան զամենայն եկեղեցիս է Հայոցն 'ի Ձիւրա : Գետ նորա հոգևակաւոր է հնութեամբ եկեղեցի նոցա 'ի Կալկաթա, կառուցեալ յամի 1724 'ի Նազարէթայ ումնմէ, յորմէ և կալաւ զկոչումն. այլ զՆազարէթայ չիք ինչ ուրեք յիշատակեալ յառաջագոյն : Ապա յամի 1734 յաւելան զմբէթ և զանգատուն եկեղեցոյն. այլ յումմէ կամ դր ծախուք ոչ է գիտելի : Գետոյ ուրեմն, յամի իբր 1780, ականաւոր ոմն 'ի Ժողովրդենէ անտի Խաչիկ Առաքելեան, ետ արիանել շուրջ զեկեղեցեան պարիսպ հաստակաւոյց, և 'ի բակի անդ զվանս երիցանց, ամեալ յերկրէ Անգլիացւոց 'ի պարզե եկեղեցւոյն և զժամահար յարգուն, որ իբր դարու 'ի վերայ անցեալ, տակաւին յազնուագունիցն համարի է 'ի քաղաքին : Գանուանել իմ զԽաչիկ Առաքելեան, յուշ լինի ինձ հանդէս տիրապետութեան նորա առ քաղայ և առ պետութիւն Բրիտանացւոց, ընդ որով կեցին 'ի խաղաղութեան և 'ի բարօրութեան Հայք 'ի Հնդկիս : Խմբագիր կալկաթեան լրագրաց, յերկրորդում հատորի որ 'ի տիպ հարաւ յամի 1865 հրամանաւ տեսլութեան Հնդկաց, տայ յէջ 220 զնկարագիր մեծապայծառ խրատութեանց և տօնից, որ խմբեցան 'ի Կալկաթա յամի 1789 յամենան յու.

յիսի, իրբե եհաս անդր զրոյց բժշկութեան արքային Գէորգայ երրորդի 'ի չարարաստ ակտէն : Ի պատմութիւն արկեալ պատմաբանին զխրատութիւն տեսլութեան աշխարհին և զամենայն դասուց բնակչաց 'ի վերայ ամէ.

« Այ մարթի մեզ 'ի խրատունս տօնից երեքշաբթի զանց աննել զառաւորութեամբ տիկնոյ ուրումն 'ի մերոց աստի բնակաց, որ պարգեւեաց հռոմիս հազար՝ բաշխել 'ի պարտապանս որպէս զխարք և 'ի դէպ թուիցի կացելոց 'ի տեսուչ բաշխից :

Միւս ևս շնորհ առատութեան 'ի տեսիլ ամաւ 'ի Խաչիկ Առաքելեան 'ի մեծափարթամ հայ վաճառականէ և 'ի վաղնջուց քաղաքակցէ մերմէ, որ իւրովն զանձու արձակեաց 'ի կալանաց զամենայն պարտապանս, որոց վնշտասան էր թիւ : Գայս առատութիւն, որպէս ծանծաւրս, ծախեաց նա հռոմիս հազարաց երից : Սա և այլ յողունք 'ի Հայոց լուսազարդեցին զտունս իւրեանց և զեկեղեցի պայծառագեղջա. հիւք և լապտերք » :

Գայտ է առ Հայս զի Խաչիկ Առաքելեան առ տիրապետութեան իւրոյ և առ այլոց ևս հանդիսից մեծախոհութեան, որոց կորեան յիշատակք, մեծարեցաւ յարքայէ, 'ի Գէորգայ երրորդէ, որ հաճեցաւ տալ նմա 'ի պարգևի մասին զկենդանագիր իւր մանրանկար և զսուսեր մեծադին. զորս թէպէտ ըստ ձախողակ բախտի ոչ եհաս նմա ընդունել կարճեալ նորա 'ի կենաց, այլ ամենիշխան նախարար այնր ժամանակի գահակալն Գորնվալդայ, մատոյց ապա որդւոյ նորին երիցուն Մովսէսի Առաքելեան : Պատկերս այս և սուսեր կացին մնացին յազգատահմին իբր ականդք ժառանգութեան : Ի խեղամատութիւն բնաւորութեան առնս մեծի, և մեծարանաց զոր առնէր նմա տեսլութիւն աշխարհին և բոլոր իսկ դաս ժողովրդոց, հարկ է հանել զհատուած ինչ յուզարկաւոր 'ի նմին հատորոյ խմբագրի կալկաթեան լրագրոց, զորմէ բանք եղեն վերագոյն :

29 Յուլիս 1790.

« Բաւուր կիւրակէի յառաւօտու 25 սորին կնքեաց զկեանս իւր այրն արգոյ և աւագամեծար խաչիկ Առաքելեան վաճառապետ հայ տկանաւոր 'ի կալիաթա և զլուս և գահերէց Հայոց 'ի Բենգալ :

Բարութիւն, բարերարութիւն և զրթասիրութիւն առ մարդիկ, առատամտութիւն յամենայն հանգանակս բարեկենդանութեան հասարակաց, բարեհամրոյր լաւութիւն առ ամենեւին, այս էին բարացուցականք նորա բարեմասնութիւնք: Այսպիսեաւ ջերմ և շնորհակալութիւն սիրով կապեալ էր նորա ընդ ազգին Անգլիացոց, մինչև յար ամե. նալուր խոստովանել նմա զանձն երջանիկ ընդ վիճակել իւր զքնակութիւն ընդ նոցին տեսութեամբ: Մեծարոյ եղև նա բոլորում իսկ գաղթականիս անստղիւտ ամենեւին 'ի մարդկան մախանաց: 'ի սիրելի ազգի իւրում 'ի Հայս համարէր նա որպէս առաջնորդ և իրաւարար ամենայն վիճից նոցա և գրծտութեանց, զոր հատանէր միշտ հայրաբար:

Փոհութիւն մտաց և երկիւղածութիւն, այսորիկ միայն վարէին զայրս առաքինասէր յողորմածութիւն և 'ի բարերարութիւն, անշաղախ 'ի պարծանաց և 'ի պերճանաց:

Եթող անմխիթար զայրի իւր և զորդիո եօթն, զորս կաթողին սիրէր: Զմահ նորա ողբացին ոչ միայն Հայք, այլ ամենայն աղինք, և ազգի ազգի ազանդք 'ի Բենգալ, ևս առաւել Յոյնք, սրոյ ձեռն տայր յոյժ: Համայն տանել ոչ զմեռաւ ուրեք առաւել աշխարհաւ գոյժ աւաղեալ, կամ որոյ երկարագոյն և անկեղծագոյն լինիցին երբէք մահուն աւաղանք: Յայս այր բարի մարթի, առանց կամակորելոյ իւրիք զճմարտութիւն, հանել զքնաւորութիւն 'ի Սուրբ Գրոց ընծայեալ Յովբայ, (Գլխ. 29). —

« Այք էի կուրաց և ոտք կաղաց, հայր էի ևս տկարաց:

Դատաստան զոր ոչ գիտէի, քննէի: Զարդարութիւն զգեցեալ էի և արկեալ զերաւունս հանգոյն կրկնոյի:

Ասէի, թերեւ հասակ իմ ծերասցի, և իբրև զծառ արմատոյ բազում ժամանակս կեցից »:

Խաչիկ Առաքելեան ծնաւ 'ի վերին Հոյս, և մեռաւ ամաց քառասուն և ութից. տոհմիկ էր և սերեալ 'ի խաջեայ փանուսայ ֆալանթարէ, որ իբր յառաջքան զգար հոչակեցաւ նախանձու և զօգիւ սիրոյ Անգլիացոց, որոց լնկեւրութիւն արեւելեան Հնդկաց համագեալ 'ի գնացից նորա և 'ի մարթանաց, մատոյց Հայոց ազգի ազգի յառաջաբաժինս 'ի տուրիառիկ շահաւէտութիւն նոցա 'ի Հնդկիկս:

Թաղեցաւ նա յաւուր կիւրակէի ընդ տաններորդ և ընդ մետասաներորդ ժամս առաւօտին յեկեղեցւոյ, յետ կատարելոյ սրբոյ պատարագին: 'ի յուղարկաւորութիւն նորա խռնէր որեար անթիւ և երեւիլ. քահանայապետն Հայոց ընդ կղերցն դասու, զօրապետն փոլարտուն, կրկին թիկնապահք ամեն իշխան նախարարին, և այլ ևս բազում աւագանի և զօրազլխեան »:

Այսպիսի վկայութիւն դնեն առաքինութեանց հոյակապ առնն այսորիկ ոչ նորին համազգիք, այլ Անգլիացիք: Յղել ամենիշխան նախարարին զթիկնապահս իւր 'ի յուղարկաւորութիւն տարաշխարհիկ օտարականի՝ յայտ առնէ զլափ մեծարանաց գնացելոյն: Իսկ ազգ նորա պատիւ արարեալ նմա, ամփափեաց զնա 'ի ներքս յեկեղեցւոյ, փոխանակ ամփոփելոյ ըստ սովորութեան 'ի բակին:

Ժամանակակից եկաց նմա միւս ոմն հայ անուանի Սարգիս Տէր Յովհաննիսեան Սարգսեան, որոյ ոչինչ ընդհատ բարեպատիւ լեալ 'ի քաղաքին, մեռանէր յետ ամաց լի աւուրբք և փառք, թողեալ զբազմաթիւ ընտանիս և զճոխութիւն իշխանական: Այլ բազում այն է՝ զի անկայուն է յաջորդաւ և սերնդոց երկաքանչիւրոց թէպէտ և զփորձ առեալ յեղման բախտի, բայց

կալան միշտ զպատիւ իւրեանց և 'ի կարիս :

Մնայր Հայոց 'ի Կալկաթա դեռևս զմիւս ևս աշխարհել զմահ մեծապատիւ առն բարւոյ 'ի ժողովրդենէն, զՅովհանն յանայ Ելիսսեան ասեմ զճոխ տեառնէ կալուածոց 'ի Բենգալ Սերեալ նորա 'ի նշանաւոր նախնեաց, յանձին երեւր զամենայն առաքինութիւնս, որ 'նիւթեն առաքինւոյն զղարմանս և զակնաժութիւն աշխարհի : Ըստ քաղցրահամ բոյր բարուց իւրոց գնայր նա ընդ ամենեսին հեղութեամբ և ցածութեամբ, որ անպատիր տիպքն են անկեղծ կրօնասիրի : Բարեպաշտութիւն նորա անպարծ և ողորմածութիւն անպարագիր, կամ բոտ բանից քերթողին :

« Բարեբարէր անբերան,

Շառագունեալ ընդ համբաւ » :

Ի դարման կարեաց և կրօնից և ուսմանց բաշխէր արքայօրէն գանձ առաւտաձիր, զոր առ յաճախութեան գործ է 'ի պատմութիւն արկանել : Արձանադիրք 'ի յիշատակ նորա դրոշմապէր յորմս եկեղեցւոյն Հայոց և բժշկարանի հիւանդանոցին Կալկաթայ, շնորհակալեօք վկայեն ազնուագութ առատութեան նորա և բարեկրօն լաութեանց : Ի մահու նորա կորուսին գաւառային և այլ կաճառք խնամակալօք եղկելեաց զբարեկամ առաւտ և զհզօր ձեռնկալու : Ո՛տայր տոհմի նորա զհետ երթալ չընաղ օրինակին :

Մի լիցի ինձ լռել զանուն այլոյ ուրումն յունեւոր վաճառականաց մերոց 'ի Հնդկիս, զՅարութիւնի Արքարեան զհեղինակի համանուն վաճառատան : Մեկնեալ նորա 'ի բնիկ երկրէն 'ի Պարսից 'ի տիս տղայութեան, եհաս տաւապանօք 'ի Բամբայ. և բնակութիւն կալեալ անդանօր, ձեռն էտրկի 'ի յահալաճառ դուքնաքեալ և ապա օգնեալ 'ի բախտ մեծանայր ընչիւք : Ելեալ ապա անտի 'ի Կալկաթա, երաց անդ զվաճառատուն Արքարեան ընկերաց, զժանօթն ամենհոյսն և զանկարօտ ընծայութեան : Եդ նա զգպրոց 'ի Զուզա 'ի Պարսս. և ձեռնտու լեալ յալովից

'ի համազանց իւրոց, կատարէր զկեանս ամաց 85, յամի 1863 'ի 16 աւուր ամսեան մայիսի : Տես ինձ զի նախ քան զամս ինչ, նախկին հայ ոստիկան տեհի Անգլիացւոց՝ եկաց 'ի Կալկաթա ոմն 'ի տանէ աստի (1), որ 'ի ձեռն ամենիշխան նախարարին Հնդկաց ընկալաւ յարքայէն Պարսից զնշան Շիրօխօղչիդ պատուոյ : Հայք 'ի Հնդկիս ոչ վերջացան 'ի փութոյ դաստիարակութեան. և չե Անգլիացւոց ոստանկաց կամ սոսկականաց յայտնեալ զտեհն և կամ տնօրինեալ զհայթայթանս արկանելոյ 'ի բնիկ երկրին զլոյս գիտութեան, վաղու ևս հնարէին նոքադնել վարժեար, և բոտ ներել ժամանակին, դաստիարակեալ զմանկսին, կրթել զնոսա 'ի կրօնս նախահարց : Իբր 'ի մուսու դարուս երաց 'ի Կալկաթա զառաջին վարժոց Հայոց Յարութիւն Գալուցեան, գաւառաւ հաւյեցի. և թէպէտ վարժիցն 'ի զուգակիւ ածեալ ընդ արդի հրահանգաց չէին ինչ վեհ, բայց ընտին զպէտս այնց աւուրց, դրդեալ զՀայս և 'ի ջանասիրութիւն դպրութեան : Ապա յետ ամաց եթող Ա. Մուրատիան, 'ի կազմել զգպրոց Հայոց 'ի Կալկաթա, հուսփիս ութ հազար, յոր գումարեալ և ժողովրդեանն հանգանակաց, հիմն եղաւ նովաւ Հայկեան Մարդասիրական ճեմարանին, բացելոյ յամի 1821, յերկրորդում աւուր ապրիլի : Յայս ճեմարան խառնեցաւ ընդ հուպ գպրոց Գալուցայ. այլ արժան է յամել 'ի խօսս ինչ զայսմանէ : Պարագայց ամօք 'ի ճեմարանի եեթ աստ եղև ընդունել յոգունց թէ արդեօք և հանուրցի 'ի հայ մանկըտոյն զդաստիարակութիւն : Չէր ինչ նա ընդհատ 'ի վարժարանաց Անգլիացւոց, որ էինն յայնժամ 'ի Կալկաթայ. այլ յառաջ քան զամս քսան սկըսաւ խրթնանալ առ փրատու ցանկութեան նախամեծար առնելոյ ծնողաց զվարժեարս Անգլիացւոց քան զբուն ազգին, մինչև ուր ուրեմն չմնալ 'ի նմա

1 Սէթ Յ. Արքարեան որդի Յարութիւնի Արքարեան :

բայց ամիոյ միոյ ձրի աշակերտաց. թէ պէտ և մարթէր պարծել նմա յանշար-
ժուն կալուածս իւր և 'ի շարժուն իրս ու-
նել զտարևոր հասս ոչինչ նուազ քան
դհուուփիս բիւր: Թէ չարեացապարտ
վայրաբերութեան նորա կացին սնհո-
գութիւն և անզգաստութիւն կաճա-
ւորդաց նորա և ժողովրդոց, չիք երկ-
բայել: Սակայն քաղցր է նկատել, զի
յամաց ինչ հետէ պոյծառանան տա-
կաւ ակնկալիք նորին, և դիւրաւ բնա-
կին և դաստիարակին անդ այժմիկ
մանկունք Հայոց իբր քառասուն: Քաղցր
ևս է իրազեկ լինել զի 'ի վերջնում նա-
խաշաւիդ քննութեան 'ի մուտս համա-
լսարանին կալկաթայ, ոչ ինչ անհաւա-
սար եկաց 'ի կշիռ ընդ այլոց յանգլիա-
ցի և 'ի հնդիկ դպրոցաց, երից 'ի վեց
աշակերտաց նորա անցեալ քաջիկ ընդ
փորձ հանդիսին, երկուցն յառաջնում
դասու և միում յերկրորդում անդ:
Այս ելք ազդէ զյոյս վերակենցաղելոյ
ճեմարանին: Ոչ այլ ինչ խնդրի առ 'ի
յարդարել զնա նախապատիւ, բայց
հոգ հանապազօր և օգնականութիւն
հասարակաց:

Եւ իբր իցէ հրաժարել 'ի ճեմարանէս,
մինչև տուեալ զանուն այնր վաստա-
կաւորի, որ զամս իբր քառասուն վար-
ժապետ եկաց անդր և ապա տեսուչ,
այն է զմեծայիշատակ Յովնանիսի Ավ-
դաբան. որում շնորհապարտ յոյժ
զատանին և ճեմարանն և օգնականք
նորա ընդ ինքնանուէր վաստակոցն և
անմեղկելի ճգանց 'ի յորդոր դաստիա-
րակութեան Հայոց 'ի Հնդիկս: Յովնան-
նէս Ավդաբան մեկնեալ 'ի տղայ տիս
'ի բնիկ երկրէն 'ի Շիրազայ Պարսից,
եկն 'ի Հնդիկս յառաջ ևս քան զկէս
դարու. և վառեալ 'ի խանդս բանասի-
րութեան, հանէր զտիւ և զգիշեր 'ի
հմտութիւն հայրենի և անգլիացի բար-
բառոց, ոչ ապախտ արարեալ և զհե-
լենամբ և պլատինաւ. և անխոնջ տընու-
թեամբ արար իւր անուն 'ի դպրու-
թեան: Դնանթ էր նա յոգունց 'ի բա-
նիքուն և 'ի մեծանուն որերոյ 'ի Հրն-
դիկս և յԵւրոպա, յորոց ընդ յորովա-

գունից, նա աւանիկ ընդ որոց անուա-
նիքն էին 'ի բանասիրութեան արեւե-
լեան լեզուաց, յաճախէր 'ի տուրևառ-
նամականոյ: Եղև նմա նսնհ բարեկա-
մելոյ ընդ բարեյիշատակ Յակովբայ,
և ընդ այլոց 'ի մեծահանճար և 'ի
գերակայ նմանեաց: Յօղացեալ նորա
զամս իբր յիսուն Ասիական կաճառոյն
Բննդաւա, ուղերձեաց գահերիցու նո-
րա և յօղից յամի 1827 զերեխայրիս
դրաւոր երկոց իւրոց զանգլիացի թարգ-
մանութիւն պատմութեան Հայոց զԶա-
մէան վարդապետի. և ապա եդ հա-
յերէն և այլ բազում գիրս: Ի կալ նորա
վարժապետ 'ի ճեմարանին, բաժանէր
զպարապ իւր ընդ վարժս դպրութեան
և ընդ կրթութիւն ընտանեաց: Այլ
վաստակոց առն այսպիսոյ, աւաղ,
զուն ուրեք ընծայի 'ի ժամանակաց
արժանին պատիւ, և Յովնաննէս Ավ-
դաբան ոչ զիպաւ արտուղութեան 'ի
կանոնէդ: Մահ նորա յայնցելումն ամի
փետեկեացի ժողովրդեան Հայոց վիհ
անդնդախոր, զոր չէ գիւրին կարկատել:
Այլ արժան է յուսալ, թէ տակաւին
իւրաւ արասցէ յիշատակի նորա ազգ
նորին:

Սակայն 'ի հռչակ համբաւոյ բանա-
սիրութեան անցոյց զնովա Միսրովբ
Դաւթեան, այլազգ ևս թաղիապետեան
կոչեցեալ (!), մատխոհ և բանագիրնչա-

1 Ներեսցէ արդոյ պատմագիրս ոչ գալ ինձ
ի կարծիս իւր զերեմն ականաւորացս երկուց
'ի հայ դպրութեան 'ի Հնդիկս, զի որ անդասին
յամէ 1847 մինչ 'ի 1852 աշակերտեաց Յովնան-
նիսի Ավդաբան 'ի Մարգարիտական Դժմարանի
'ի կալկաթա, պատահեալ անդ ստեղծ և Մես-
րովբայ Դաւթեան, 'ի մօտոյ ծանեայ գերկա-
քանիւրն: Յովնաննէս Ավդաբան էր հանձնար
ինքնարար և գիշերաշան ուղեւորեան միւր: Ան-
ցեալ նորա ընդ գիրս անթիւս, և զորովիցն ա-
ռեալ զիւրզգականին իւրոց գիւրով սքանչելի, մը-
թերեաց յանմին հմտութիւն անբաւ, մինչև յի-
րակ լինել նմա կենդանի գիւրան մօտենից: Այլ
նա 'ի կատար անդր ծառայ անգլիական բարբա-
ռոյն, մինչև ոչ միայն սխրանալ Անգլիացոց ընդ-
այն, այլ և 'ի պատուի ունել զնա գիտնոց իսկ
նոցին:

Իսկ Մեսրովբ Դաւթեան որ ինչ բերէրն, ըն-
կալաւ 'ի բնութենէ: Ուսեալ էր նա 'ի Հայաս-
տան հայերէն, ուսաւ և անգլիերէն 'ի Հնդիկս:
Սա եռանդոտ էր և յար 'ի շարժման. իսկ նա

Նաւոր, ելեալ յԱրարատայ յերկրէ ծը-
նընդեան իւրոյ յամի 1824 ընդ. եփրե-
մայ հայրապետի, իբրեւ մեկնէր սա
ընդ եպիսկոպոսաց իւրոց և երիցանց
'ի սահմանս Ռուսաց, խուսել'ի հարբս.
տահարութեան իշխանութեան Մահ-
մետականաց: Եմուտ Մեսրոպ 'ի վար-
դապետարան Անգլիացոց 'ի կալկա-
թա, ուր զգրովք եկեալ առ ժամանակ
մի, արար ընդ այլս 'ի հայ մասնից
իւրոց և զվէպ վարուց Հիբերայ բազ-
մահմուտ վարդապետի, որում ծանօթ
իսկ էր. և Նուիրեաց զՊաղեստին Հի-
բերոյ մեծահռչակ հանեալ 'ի հայ:

Յամի 1844 զայն առաջին նուազ
յոյեցան 'ի Հայոց մանկունք երկու 'ի
կալկաթայ քաղաքէ յԱնգլիա 'ի դաս-
տիարակութիւն: Ապա յետ ամաց եր-
կուց նախակրթեալ միւս այլ մանկան
ի վարժարանի լամարտինբայ, և տա-
րեալ անդր զմրցանակն ոսկի, անց
գնաց և նա 'ի Լոնդոն 'ի կատարել ըզ-
կրթութիւն իւր: Առեալ նորա անյա-
պաղ զկարգ. ատենական 'ի համալսա-
րանին ֆամբրիչայ, ել'ի բարձ իրաւա-
գիտութեան. և դարձ արարեալ յառաջ
քան զամս իբր հնգետասան 'ի կալկա-
թա, ձեռն էտակ 'ի պաշտօն օրինաց 'ի
գերագոյն ատենի Անգլիացոց: Վեհա-
գունի վիճակեալ նորա հանձնարոյ, և
հեղեղաստատ հոսանաց պերճախօսու-
թեան, ընդ որ միալուծ կցորդեալ զլան
և զժրութիւն, արար իւր փութս յաս-
պարիս անդ իրաւագիտութեան: Ելթէ
յառաջ քան զամս միայն երեսուն ա-
սէր ոք 'ի Հայոց անցանիւ երբեմն ու-
մեմն 'ի ժողովրդեանէն 'ի բազմոց գերա-
գոյն ատենի Անգլիացոց, առ զա-
ռանցեալս համարէր: Վերբերութիւն
Պօղայ 'ի մեծափառ բարձ ատենակալի,
բանայ նա զբաղմափայլ հանդեր-
ձեալս: Որժան է յիշատակել զի ընդ-
կարգել Պօղայ յատենակալ և ընդ նախ-
կին բազմել նորա 'ի դատ ելեռանց,

հանգարտ և 'ի խորհուրդս մանաւանդ քան 'ի
խօսս համակէտ: Այս խորք բարուց և արտը-
ժակաց 'ի վեր երեկն և 'ի գրոց երկաքանչիւ-
րոցն:

նստիկան էր ատենի 'ի կալկաթա, և
ըստ պատշաճի կարգին բարձակից 'ի
դատաստանս՝ միւս ոմն հայ ընչեղ և
արդոյ, սերեալ 'ի բարեյիշատակ Ա.
Գէորգայ 'ի միոյ 'ի նոցանէ, որ կառու-
ցին զեկեղեցին 'ի Գալա:

Իրաւագիտութեան թուի ցայս վայր
'ի Հնդիկս յաճախագոյն ձգեալ զուշ
պատանեաց Հայոց. զի զմուս ածեալ
զթիւ նոցա սակաւ 'ի կալկաթա և յայլ
և այլ գաւառս աշխարհին, բազումք
են 'ի նոսա իրաւագէտք: Յետ մեծա-
համբաւ ճարտասանին Պօղայ, որ նախ-
կին 'ի Հայկազունս կալու գառնական
կարգ Անգլիացոց, յարեցան յօրէնս և
այլք ոմանք ոչ ինչ նուազ քան զուշ.
յորոց մին այժմ է դատաւոր 'ի Դեհլի,
այլոցն զբաղեալ յայլ և այլ գաւառանս
ընդ բնաւ Հնդիկս. այն ինչ ահա հան-
դերձին յԱնգլիա այլ ևս բազում պա-
տանիք դառնալ այսր ընդ հուպ և յաւե-
լու 'ի թիւ համալսարհիկ իրաւագի-
տաց: Այլ բաց յորոց դատասանք լի-
նին հրապարակաւ, կան և յոգունք յազ-
գի ազգի կարգս դատաստանականին,
է որ 'ի ջատագովութիւն դատից մա-
նունց, և է որ յառաջնորդութիւն իրա-
ւանց, և շատք ևս այնոքիկ են, որոց
երբէք երբէք անցեալ քայիկ ընդ կա-
րետր քննութիւնս զրոյմեցան 'ի գիրս
գիւտանաց. և աւուր աւուր յամենայն
ատենան երեւել առնեն զանգլիացի և
զհնդիկ համարուեստիւք: Յախորժա-
կան անձանց թէ արդեօք 'ի յուսոյ շա-
հուց ածան Հայք յիրաւագիտութիւն,
ոչ է սատ հետազօտել. այլ զիտելի լի-
ցի, զի շատ իսկ ցուցին ցայսվայր զա-
յրուցութիւն մտաց, որով կարացին կալ
յակաստանի ընդգէմ ոստիսաց, և խրա-
խուսեցին նկրտել մտադիւր 'ի հան-
դերձեալս:

Բժշկականին իսկ ուշ եղաւ անդստին
'ի քսան ամաց հետէ և այսր, էն մեր
այժմիկ չորք բժիշկք վիրաց և պաշտօ-
նեայք բժշկաց գրեալք 'ի սպաս արքու-
նի, և պաշտօնեից նոցա դարձեալ սա-
տարք երկու արձակք 'ի նմին սպասու-
որոց ամենեցուն անթերի լցեալ ըզ-

պարտաւորութեան, բարեհաճութեան արձանանան ի բռնակալութեան:

Պատրաստին ահա և ոմանք յԱնգլիա մրցել ի մատաւառ քննութիւնս անդ սահմանեալս ի մուտս արքունի սպասու, և կէսը դարձեալ կրթին ի բժշկական վարժարանին կալակաթայ: Են և երկու կամ երեք ոմանք, որ կալան զարուեստ գործարկան և ի դէպ իսկ է այլոց կրթել զհետ նոցա մեծայայտ: Հետեւին յաշտեալ առաջնոյն ի Հայոց Հնդկաց աշակերտի ուրումն Դովթեան վարժարանին կալակաթայ ի միջանս տարեւոր քննութեան ի Լոնդոն, էանց ի սպաս տեսութեան Հնդկաց. և չիք երկմոել թէ յոգունը յայսմհետէ կա. միայն մտանել ի նոյն գործ արքունի, որպէս թուի ահա հանդերձել երեւել ոմանց և ի մատաւառ քննութեան:

Համայն յուշ լիցի, զի այս քսան և հինգ ևեթ ամբ են զի սկսան ի Հնդկիս Հայք ըստ պատշաճի դաստիարակել զմանկտին. և ամբ տասն կամ երկուտասան, յորմէհետէ մանկունը նոցա, ուստեք և դասերը, գնան գունդագունդ յԱնգլիա ի դաստիարակութիւն: Եղեն իսկ զի յառաջ ժամանակաւ ելին անդր մանկունը միայն երկու կամ երեք, յորոց յիշատակեցից զԳովսէփ Էմինեան, որ էլ անդր յամի 1751 և ի գիր եհար յամի 1792 ի Լոնդոն զգէպս կենաց իւրոց և որ ինչ անցին ընդ նա ի մայրաքաղաքին: Էմին ինքնին գրեաց անգլիերէն զկենցաղականն իւր, որ յերեւել իւրում գրաւեաց իմն զուշ հասարակաց: Կեան տակաւին ազգականք Էմինի ի կալակաթա, յուշի կալեալ ըզպարառութիւն անցից նորին: Չասեմ թէ արգասիք դաստիարակելոյ զմանկտին ի բացական և ի բարգաւաճ երկրին ետուն գոհութիւն հերիք, այլ և զայն ժխտելոյ ունիմ եթէ եղև անտիօգուտ, մինչև ի դէպ իսկ վարկեանել թէ դոյն ինչաւելի հմուտութեամբ, և խուճ մի փոփոխութեամբ հնարից, ամբթի հանապազորդել փորձոյն և տալ Հայոց յառաջ անցանել ի մասունս բարոյականին և կենցաղական:

Նին: Սակայն օրէն է ակնարկել, ոչ յոք ուրոյն հարկանեմ զբանս, զի բազմածախութիւն փորձոյն ցայս վայր կասեցոյց զյուրվս ի յղելոյ զմանկունս յԱնգլիա. այլ ամենայն փորձը ի սլըզբան մեծածախք են, կամ թէ բնաւ իսկ ի դերև ելանեն. ժամանակաւ և հմուտութեամբ միայն յաջողի բառնալ զխոյ, և խոյս տալ ի վրիպանաց:

Բաց յորոց կալանն զայլ և այլ պաշտամունս, պարտապին պէսպէս և այլք բազումը, որ տեսարք են անգաստանաց, որ վաճառականք, որ առգինք և որ օժանդակք ի գործարանս պետութեան և վաճառականաց: Յառաջ ժամանակաւ պատաղէին ի վաճառս զոգցես ամենեքին, յորոց յուրվագունից տարածեալ զվաճառականութիւն իւրեանց, առ վաճառապետս գրեցան ի մայրաքաղաքս և ի քաղաքս ուր և բնակէին: Այլ անտի և այսր ողորմագին այլափոխեցան իրք, և որով իւրք և առաւելորցուն այժմիկ պայմանը նոցա և ակնկալիք, տնջացեալ են անուշտ իւր վաճառականք առ նախնեք. և բաց ի վաճառատանց երկուց կամ երից, հազիւ ուրիք թէ իցէ վաճառական հայ ըստ բուն մտաց ձայնին, հինաւորաց հոյակաւորայն և յաւորդաց նոցա ընկճեալ տակաւ ի ձախողակաց:

Հայք յետ բնակելոյ ի Հնդկիս կտլան անդ ընդ պարագայս ամաց զարեւելեան ձև իւրեանց և զսովորոյթս. և կացին մնացին իբր ժողովուրդ որիչ և անջատ. խնամեցեալ միայն ընդ իրեարս, և ըստ կարի խորեալ ի կենակցութենէ օտարաց, որոց յար պատահէին զգործոյ: Ամենայն ուրեք չքեղ և խորխորչան պատմուճանք նոցա, մանաւանդ թէ խտրիք ինչ արեւելեան դիմաց ի յայտ ածէին գնոսս: Ընդ երկար զառաջս կալեալ նոցա եկամուտ եւրոպական սովորութեանց, խմբէին խրախամիտ զտօնս ազգայինս և կրօնականս որպէս նախահարք իւրեանց ի հայրենիս: Առջերմ և սեւն սիրոյ եկեղեցւոյ իւրեանց, միոյ ի հնագունիցն յաշխարհիքրիստոնէից, հաւատային սերտիւ ի պատգամս

նորա և 'ի վարդապետութիւնս. հայա-
տակեալ համայն կարգաց նորին և ա-
բարողութեանց, Ոչ միայն՝ կղերի նոցա,
այլ և աշխարհականացն դասուց փոյթ
էր իսկ և իսկ ընդդէմ կալ փորձոյ նորա-
ձեւութեան և կամ սաղարանաց այլակրօ-
նից 'ի քեցեղ զնոսա յեկեղեցւոյն, թէ
և 'ի խնդիրս կրօնից չիք նոցա մտահա-
ճութիւն կամ նախանձ մուրհան, մա-
նաւանդ թէ ազատամտագոյնք են քան
զոր 'ի նախակրօն վարուց նոցա մարթի
ակնկալել: Այլ ժամանակն, որ զհրաշս
առնէ, և բազում այն է զի տնօրինէ
ղգեսրիվերոյս միահամուռ ճգանց հռչա-
կաւոր առաջնորդաց վերաստեղծու-
թեան աղգաց, գործեաց այլայլութիւնս
մեծամեծս 'ի միտս, 'ի սովորոյթս, 'ի
գնացս և 'ի կրօնս իսկ Հայոց 'ի Հնդիկս:
Աճեցին այլայլութիւնքս տակաւ. և
թուին աճել տակաւին: Չէր կարծել
թէ չմարթէր աղգել տակաւ 'ի նոսա
որ ինչ անցանէրն զնորք և կամ հա-
մազել նոցա 'ի յաճախութենէ հազոր-
դակցութեան Անգլիացւոց և 'ի դարու-
թենէ բարբառոյ նոցին: Սկիզբն փոփո-
խութեանս 'ի հանդերձից եղև, զոր
փոխանակեցին ընդ եւրոպականացն
զոր այժմ ագանին գրեթէ ամենեքին.
զի բաց 'ի քահանայէնոցա, դուն ուրեք
արկանէ որ պիտոյն մի ձորձ իւր արևե-
լեան: Բնկալան ընդ զգետուն և զսո-
վորոյթս եւրոպական կենցաղի. և ընդ-
ծաւալել դաստիարակութեան՝ առին և
զլեզու Անգլիացւոց: Խօսին գեռ հայե-
րէն ոմանք, մանաւանդ երիցագոյնք,
այլ հազիւ իմանայ զայն բարբառ զար-
մէն նորատունի: Եւ ոչ այս միայն, այլ և
սուրեւառք ամուսնութեանց եղեն յո-
գունց ընդ Անգլիացիս 'ի Հնդիկս և
յԱնգլիա իսկ, և գլուխ ամենայնի՝ ան-
շատեալ տոհմից ոմանց յեկեղեցւոյ իւ-
րեանց, յարեցան 'ի նոցայն: Թէ այլա-
փոխութիւնքս այս տայցեն Հայոց 'ի

Հնդիկս քնաս թէ օգուտ, վիշտ եթէ
բարեբաասութիւն, ժամանակին է ըզ-
խնդիրն լուծանել: Այլ հայեցեալ 'ի
պայման նոցա այժմու, չիք յերկուս-
նալ: Ղի 'ի թափոյ ուստեք շարժու-
թեան թէ ոչ չըլիցին յետս կոյս, այլ
ևս ալք ինչ, և վճարեալ է վասն նոցա.
զի կորստեամբ հայրենի բարբառոյն
ուծացեալ նոցա համայն և 'ի կրօնից
իւրեանց, և զանգեալ ընդ եկս կամ
ընդ բնիկս եւրոպացիս, ճանաչիցին
թերեւս այնուհետեւ իբր ազգ ինչ օտա-
րախառն հանգոյն եւրասեանց: Այլ
զիարդ ինչ և մնան նոցա ապագայք,
եթէ բնաւ իսկ իղձ լինին յաշողել 'ի
պատեհազմի կենաց, և ոչ վերջոտնել
յարշաւանին քան զայլազգի դրացիս,
մի ակն կայցին առանց մեծաջան խնա-
մոց և երկայնամիտ պնդութեան և ա-
ռանց ընտիր դաստիարակութեան որ-
դոց կանգնել յաղթանակ յուշ լիցի նո-
ցա զի յապախտ լինել ջանից, հասցէ
թշուառութիւն, որ մահագեղն է որոց
ոչն համահետ ընթանան ընդ հասա-
րակաց բարգաւաճանաց, և որոց բա-
ժին 'ի բացեայ 'ի մեծարանաց՝ եպե-
րանք են բնակցաց:

Եւ արդ, ընթերցասէրք, սովին վեր
'ի վերոյ գծագրաւ զրաւ առնեմ պատ-
մութեանս, զոր 'ի ստուարութիւն մա-
տենից մարթէր երկայնել. և հանգէտ
համառօտիւ ժտեմ զթողութիւն թերու-
թեանց որ սպրդին մերթ անխորշելի
'ի կերպարանս բանից ընդ հանել ու-
րուք զխորհուրդս իւր 'ի բարբառ օտա-
րին: Տեարք, որպէս զիարդ 'ի խամուց
ածի զգիրս 'ի գլուխ, և զոյժ թափեցի
ընդունելի յարդարել զայն, և թէպէտ
և պատահիցիմ իսկ դատաստանի ձե-
րում, ակն ունիմ զի մեղմով արասլիք
զայն այնմիկ, զոր յերկար ծաներուք
լինել 'ի Հայոց 'ի Հնդիկս:

ՀԱՅԲ Ի ՀՆԴԻԿՍ ՀՈԼԱՆՏԱՑԻՈՑ

Ի կոյտս կղզեաց, որ անկանին 'ի հարաւոյ արեւելից Ասիոյ, և կոյին Արեւելեան Հնդիկը նեղըրանդաց կամ Հռլանտացւոց, ականաւոր է ամենաբեր և ամենագեղ կղզեակն ճաւա, յորում բաղմավաճառ պայծառանան ծովեղբերոյ քաղաքանին երեք, Բատաւիա՝ յարեմտից նորա, աթոռ նախարարի նեղըրանդեան պետութեան, Սամարանդ 'ի միջավայրի, և Սուրաբայա յարեւելից:

Ի գլուխ դարուս, ի յին Հայք ոմանք 'ի Բատաւիա, ելեալք 'ի Մադրասայ 'ի փորձ վաճառաչաճութեան. և զի վաճառք մադրասացիք և կալկաթացիք յայնժամ գնային առ հասարակ և բազմապատիկ տային շահ, մեծացան անդ վաղ վաճառականք մեր:

Գէորգ Մանուկեան, եղբայր Մելքումայ Մանուկեան, որ հայր եկաց ազգատոհմի մեծի 'ի Կալկաթա, մեռաւ յամի 1827 'ի Բատաւիա, թողեալ զերկերիւր բիւրս գիրքը դրամակշռոց: Հըռչակեալ էր նա իբրև զհայ ոմն Կրետոս 'ի ճաւա. և ասի փոխ տուեալ նորա երբեմն արծաթ բազում 'ի պէտս պետութեան երկրին:

Քեռայր նորա Բակովբ Բարութիւնեան, կառուց յամի 1851 զաղօթանոց Հայոց 'ի Բատաւիա. և յայնմհետէ սահմանեցաւ անդ վիճակ քահանայից եկաւորաց յԱմենափրկիչ վանացն Զուղայ:

Գէորգայ էին քորք երկու, Մարիամ հարսնացեալ Բակովբայ Բարութիւնեան և Թագուհի ամուրի. ամողք համաբարոյք, բարեբարոյք, բարեգութք և բարեկրօնք. որոց սփոփանք 'ի կեանս և փառք 'ի մահուն՝ բարերարութիւնք իւրեանց ազնուականք: Ժառանգեալ նոցա 'ի մասնէ զմեծութիւն եղբօրն, վարեցան նովաւ արդարեւ 'ի պէտս ընկերին և ազգին: Լիաձեռն հանին 'ի

հանգանակ ազգին բաժին շքեղ, որով կառուցան 'ի Բատաւիա այժմու եկեղեցին Հայոց՝ յանուն սրբոյն Յովհաննու յամի 1854, և Մանուկ և Թարութիւնեան ուսումնարան յամի 1855: Եւ կնքեցին զկեանս իւրեանց 'ի Բատաւիա տիկնայքս բարեպաշտօնք, Թագուհի յամի 1856, և երէցն Մարիամ յամի 1864: Ներեցէք, հոգիք վեհազունք, եթէ անձկութիւն գրոյս ոչ տայ աստ ճառիւ բարեբանութեան 'ի մի վայր գումարել զբարերարութիւնս ձեր անթուեկիս, և անբաժանելիս 'ի պատմութենէ այսր ժողովրդեան, որ յարձանագիրս եկեղեցւոյ իւրոյ և ուսումնարանի՝ զանուանս ձեր մշտնջենաւորէ: Յիշատակ արգարոյ գովութեամբ:

Յաւուրս Գէորգայ Մանուկեան փայլեաց փառք 'ի Սամարանդ միւս ոմն հայ յուղայեցի Եովսէփ Եովհաննիսեան Ամիրեան: Երդեաց աստ սմա մեծութիւն իբրև զհեղեղ, և իբրև զհեղեղ իսկ էանց ամենայն:

Յամի 1825, յապատմաբն ճաւաջւոց, և 'ի չուել հոլանտացի զօրու 'ի միջնաշխարհ անդր ընդդէմապատմաբայն ասպատակի, նպարակեաց լիով զբանակ արշաւանի Հոլանտացւոց զաւուրս եօթն մեծատուն մեր հայ 'ի ցոյց առատութեան կամ 'ի պարծանս ինչ անուան հայկազին: Ասի լեալ նորա այր առատ և մարդասէր յոյժ:

Առ սովին աշխարհակոյտ վտարան, ջութեամբ այլուր տային պատերազմ Հոլանտացիք, և ոչ գոյր նոցա զօրութիւն 'ի ճաւա, ուր վտանգն ահեղ սպառնայր քրիստոնէից կորուստ դժընդակ:

Արդ ըստ կարգաց պետութեան երկրիս, մարդին 'ի զէն արբունք ամենայն գաղթականին 'ի պէտս հարկեցուցիչ դիպաց: Այս գունդ ժողովրդեան սակաւաձեռն, չև հասեալ արքունի դո-

րականին, զիմեաց յասպարէս մոյննա-
խանձ մարտին, էին 'ի հեծեալագորու
գնդիս և Հայք ոմանք. յորոց անկան 'ի
մարտին Յակովբ Մարտիրոսեան և Խա-
չիկ Խատուրեան, Տէր Մարգարեան
քեռին իմ, պատարադեալ զանձինս 'ի
վերայ ժողովրդեանն :

Եւ այլք ապա 'ի Հայոց հասին ճար-
տարութեամբ իւրեանց 'ի գոյաւորու-
թիւն երևելի 'ի ճաւա, և ձգեցին կո-
րովի աղորութեամբն զուշ եւրոպացի
գրացեաց. այլ 'ի պակասել նոցա, պա-
կասեաց և ճոխութիւն նոցին, պակա-
սեաց և ազգաւորութիւն նոցին. զի 'ի
հայ հարց և 'ի հոլանտացի մարց ան-
տի՝ դարբնեցան որդիքն 'ի ձև և 'ի ձայն
միայն մայրենի: Եւ զինչ շահ եղև սե-
թեթեթ սերնդոյն 'ի մուրացածոյ ձևոյն,
Որով վիճակաւ դանձու, որով կարգաւ
ընկերական կենաց, կամ որով այլով
բարեմասնութեամբ եղև նա 'ի վեր, թէ
մանաւանդ ոչ 'ի վայր քան զայլս: Այլ
'ի հարց նիւթին որդւոցն ապագայք:

Հերու վճարեաց զկեանս 'ի Բատա-
ւիա Մանուկ Որդանանեան, այլ բարի
և կարի ազդասէր. որ կազմեացն 'ի
Ջուղա զվարժանոց հայ օրիորդաց, և
այլում ևս անդ վարժոցի տղայոց
նպաստս մատոյց: Արժան է գովել աս-
տանօր և զուսումնասիրութեան Գէորգ
զայ Աւետ Չաքարեան, և յիշել զկանս
նորա, որով արար դիրս ոմանս հայե-
ցիս. և յանցելում ամի վճարեցաւ 'ի կե-
նաց 'ի Սուրբայա, թողեալ զկենցա-
ղական իւր ստուար ըստ լրոյ:

Ձաղաղք Հայոց յայսմ կողով եղեն
'ի սկզբանէ և այսր յահալաճառ, և ու-
րեք ուրեք նաև զործ կալուածոց:

Եւ այս այսբան՝ զանցելոց. դար-
ձուցորք արդ վաչս յոր դեռ ևս կանս:

Հայք առ մեզ 'ի ճաւա թուին բարե-
բաստիկ ժողովուրդ փոքրիկ, և կենցա-
ղաւէտ խելամոռութեամբ իւրեանց մե-
ծարոյ լեալ եւրոպացւոց: Այլ անցին և
աստի վաճառականութեան նոցա ամբ
պարարսք. և զի վտիւղն ահա առ դրան
կան, ոչ ևս է զլերին ոսկւոյ ակնկա-
լել 'ի շահուց վաճառաց:

Հայոց բնակելոց այժմ յԱրեւելեան
Հնդկիս Հոլանտացւոց՝ այս թիւ է ընդ
այր, ընդ կին և ընդ մանուկ.

ի Բատաւիա	47 տունք, իբր	80 ուղք
ի Մամարանգ	7 » »	30 »
ի Սուրբայա	40 » »	42 »
Եւրա և Սուրբայա	14 » »	18 »

Համագումար 43 տունք և իբր 170 Հայք:

Են նոցա այլ և այլ ազգային գոյք,
շարժուն իր և անշարժուն իր 'ի հաշիւս
անուանց եկեղեցւոյ սրբոյն Յովհան-
նու, Մանուկ և Եսայի թիւնեան ուսու-
մնարանին և Հայկեան Միաբանու-
թեան. զորոց սակաւ մի յառաջ միա-
համուռ յօրինեցաւ սահմանադրու-
թիւն 'ի հանրական ժողովի, և ընծա-
յեցաւ 'ի յայտնութիւն հ 'ի հաւանու-
թիւն նախարարի նեղրլանդեան պե-
տութեան: Հայկեան Միաբանութիւնն
արարաւ հանդանակաւ յամի 18. 'ի
Բատաւիա 'ի խնամ չքաւոր այրեաց և
որոց, և 'ի դատարարականութիւն ան-
ինչ մանկանց Հայոց 'ի ճաւա:

Ըստ համարոյ մտտենիցն փակելոց 'ի
վերջնում հանրական ժողովի Հայոց
գումարելոյ 'ի Բատաւիա, կան այժմ՝

ի հաշիւ եկեղեցւոյն	82,453. 66 դեւք
Ուսումնարանին	187,632. 61 »
Հայկեան Միաբանութեան	37,893. 44 »

Համագումար 207,970. 74 դեւք:

որ զուգակշիռն իբր քսան և հինգ հա-
կար եօթն հարիւր անգլիական ստեր-
լին դրամոց:

Հոգ այսց գոյից յանձն է հնգից
ոմանց 'ի ժողովրդեանէն, յորոց կազմի
անուանեալն Ատեան Բանձանձանաց
ժողովրդեան Հայոց 'ի ճաւա: Ատեանս
այս, որոյ են նախադահ մի, ասանա-
դայր մի, գանձակալ մի և խորհրդա-
կանք երկու, բերե մանայն ուրեք
զղէմս ժողովրդեանն. այլ ամբողջեալ
միշտ 'ի սահմանադրութեան անդ:

Երեսագիր նամականոյ, որ յիլիցին
Ատենիս, մարթի լինել յանուն ատե-
նադպրին, որ է այժմ Ա. Պ. Ալանու-
րեան 'ի Բատաւիա:

Դառնալ անկ է 'ի պատմութիւն
Մանուկ և Եսայի թիւնեան ուսումնա-

րունին. զի պայման ժողովրդեան՝ ի պայմանն նորա ի յայտ գայ ակներև:

Ծանեաք մեք, յառաջագոյն ի լեզուին ուսմանէ զոյ կենդանութեան աղբի, և մեծաշան հայթայթեցաք մեզ զհնարս նորին: Թէ՛ ի գաղտըն բարբառոյ ժողովրդեան՝ հատանին և աղջ նորա, այն յայտնի է ի պատմութենէ, իսկ թէ՛ ի կորստենէ աղբին տուժին ոչ միայն հայրենիք նորա առհասարակ, այլ և իւրաքանչիւր ոք ի ժողովրդեանէն, որ բռնապըօսի ի կարեաց խառնել ընդ օտարս օտար դիմակաւ, ուսանիմք և զայս ի փորձոյ՝ որ ամէ մեզ հաւատարիս թէ՛ անորոշութիւն և միայ աղբի՝ յանաւազութիւն հանին զեկամուտս: Ձիք ընդ այլաբունս ոգեխառնութիւն: Քարողեացէ նորակրօն աշխարհաբաւաքացին զանխորութեան իւրոյ առեղծուած, այլ բնութիւն հզօրագոյն է քան զվարդապետութիւն: Առ կրկին օգտի սլարտ է խնամել ժողովրդեան զբարբառ իւր, առ օգտի հայրենեաց և առ օգտի սերնդոց: Ուրիշ իսկ տեսութեամբ կարգեցաւ ուսումնարան մեր ի ճաւառ:

Օրէն է յեշել, զի Յովհան Բարու թիւնեան ոչ սակաւ աշխատ եղև ի յաշուութիւն հնարից կազմութեան նորին:

Սկիզբն առեալ ուսումնարանիս ի փոքունէ, և ըստ պատշաճի արդիւնաւորեալ զակնկալութիւն հասարակաց, արտա ճանաց ի նիւթ և ի համբաւ: Ի եռուածադիկ ամն իւր առատ ետ երեսայրիս. զի որ անգն յայնժամ կրթեցան, կեան այժմ հայեցի, խօսին հայերէն և գրեն իսկ ըստ զրոց: Այլ նախանձ հայ դպրութեան շիջանի տակաւ յօրիւրօս մեր և ի պատանիս ընդ ելանել նոյա ի դպրոցէ. զի առ ի չդոյն ի մեզ դրոց պատկանաւորաց պատանեկան անորժակաց, յայլագգիս ապաստանին նորընծայ ընթերցատէրք մեր և խամանան ի լեզուէս: Ի նախանեացն հային բանքս ի լեզու. զի մեք մեծաձայն խոստովանիմք դատապարտել և դարձուել զվարդապետութիւն

յաշուրդութեան աշխարհիկն խօսից, որ պառակտէն զմեզ և ջլատէն զգօրութիւն յառաջագոյն: և սերտիւ մաղթելք վերակենդանել բուն բարբառոյն ի բերան բոլորից, սրպէս զի հարթեացին դպրութեանս մերոյ առապարք յանսայթաքութիւն և յարագութիւն զիւտութեան և ի շահ ընթերցասիրութեան:

Յառաջ էանց ուսումնարան մեր զամս իրր տան. այն ինչ ոչ գոյր նորա այժմու փարթամութիւն իւր արձաթով. այլ անտի և այսօր փակեցաւ, և բացաւ և փակեցաւ անգրէն ըստ ոչ բախդի: Ոչ մարթի կալ ուրեք դպրոցի, որ ամային իցէ ի ձրից վնհ դաստիարակութեան դպրոցի դրացուն. զի որչափ ոք և սիրիցէ զաղջ և ակն առնուցու դպրութեան նորա, չկարէ առել զորդիս, և կարճեալ զնոսա ի կարեւորագոյն կրթարանաց մատակայից, թողու ապա անմիտ աղգասիրութեան իւրում ապացոյցս շինականս և անպիտանս:

Նոյն պատճառաց նոյն արգասիք. և չէ հարկ մանր քննել զձախողանս ուսումնարանին առ ի հասու լինել թէ աստ նոյն արգասեաց նոյն պատճառք: Ապաքէն լաւ է չունել զդպրոց ամենակատարքան թէ զթերակատարն ունել. այլ պարտ է ունել զանթերին, թէպէտ և դժուարին ի բացական այսր կղզւոյ գործ է գտանել զհաստատուն և զճարտար վարժապետս եւրոպացիս, թող թէ զհայս: Վարժապետ ոք, որ պիտի խնդրի աստանօր, որոյ իցէ նորա գերագոյն աշուղթիւն վարելոյ զվարժարան ըստ օրինի, ամենայն ուրեք պատուասիրի գերագոյն վարձու. այլ աստ ուր բազմաձախ է կենցաղ, չկարէ կեալ ըստ օրինակի լուսաւոր նմանեաց առանց բաւականի: Այս կրկին խոյք ստէպ գլխեւոցին աստ զգարաւ նոյա իցէ այս որպէս և է. գոյ մեր այժմ ուսումնարան փակ և փարթամ, և զմանկունս մեր տամք յաշակերտարանս Հոլանտացոց. և շատք ևս ի նոյնացանէ այնոքիկ են՝ որ ահա ոչ լսեն հա-

յերէն: Զաղդ իմ սիրեմես, զի սիրեմ
և զլեզու նորին, այլ որդիք իմ ուսանին
և խօսին հոլանտերէն, անգլիերէն և
գաղղիերէն. իսկ հայերէն ոչ ևս: Որոյ
զփորձ առեալ իցէ զօգոց յեղիեղակաց
մերոց, հաւանեացի մեզ թէ 'ի խոնջ
դառնալ հարց յառօրին վաստակոց 'ի
տուն երեկուն, կարճիցին ժամ և ժոյժ
նոցա 'ի վարժապետութիւն: Ի ձգել
այսր այսպէս, օն և օն, ազգ մեր եր-
րորդ հազիւ գուշակեացէ յորմէ դա-
ւառէ և յորոց հարց իջեալ իցէ իւր:
Արդ զի՞նչ առնել իցէ մեզ: Հեղգալ և
հրաժարել յազգէս, թէ ձեռն արկա-
նել 'ի գործ և դարման տանել ֆիս-
սուն: Առ ողջամիտս են բանք իմ և ոչ
առ յողգողոս, որ 'ի պարուրել զպար-
սաւ անհոգ անգործութեան մերոյ՝
փոխելապատճառ լինին թէ վայրապար
է ծախել զժամանակ յուսումն լեզուին,
որ ոչն հայթհայթէ զարծաթ. իբրու
այն թէ գործի արծաթարար միայն
իցէ մարդ: Արդար կռեսցուք զխըն,
զիրս: Է բաց յարծաթոյ այլ ինչ, որ 'ի
մարդկայնումս ընկերութեան մեծարէ
զմարդ, այն է ակնածութիւն պարտուց
և իրաւանց: Ի մեր ձեռս է մերոյ սերըն,
դոյս բախդ. մի քամահեսցուք զպար-
տուք մերով և զիրաւամբք նոցա:

Ապա և 'ի պատիւ համեստութեան
հարկ է զառաջս առնուլ ֆիսասու ազ-
գին: Յարիցէ դարձեալ ուսումնարան
մեր, այլ որով եղանակաւ, փորձեցաւ
երբեմն այս, այլ անգոր փորձոյն ոչ յա-
ջողեցին ելք:

Ինչ իբր յամէ հետէ խորհուրդք
եղեն կարգալ ժողովրդեանս յօգնակա-
նութիւն խնդրոյս զամենապատիւ ուխտ
Մխիթարեան գիտնոց մերոց, որ 'ի վե-
նետիկ, և խնդրել 'ի նոցանէ սահմանել

և կրթել և ճահաւորել զվարդապետս
երկուս 'ի վարժապետութիւն բարեձև
գաղղիի և փոխ առ փոխ յղել զնոսա 'ի
Քատաւիա առ 'ի վարել անդ իբր գե-
րեամ մի զուսումնարան մեր, վենետիկե-
ցի վարժապետին յանձն լիցին դաս հա-
յարանութեան և տեսչութիւն գաղղիին,
զի զերուպական լեզուս և զայլ գիտե-
լիս ուսուցեն անդ Եւրոպայից: Այլ
հարկ լիցի նմա բերել զհմտութիւն
գիտութեանց և արուեստից, և գի-
տել և խօսել գէթ գաղղիերէն և ան-
գլիերէն, որպէս զի զուգապատիւ բազ-
մահմուտ որերոյ լիցի նա 'ի պատուի և
'ի նշանաւոր ակումբս: Զի վարժապե-
տին պատիւ և սէր բազում՝ այն է զի
ազգեն 'ի մատաղ իսկ մանկունս զպա-
տիւ և զսէր վարժից, զոր տայն, և
զազգին, յորմէ էն: Այսպիսի կազմու-
թեամբ կայցուք մեզ անշուշտ զազգա-
յին նախակրթարան արքունի վեհ
վարժարանին. յոր ելցէ ապա մանկը-
տին մեր ըստ իւրաքանչիւր պատշաճի
'ի գլխաւորութիւն ուսմանց:

Այսարհաբարող ազգասիրութիւն
մերոցս վենետիկեան գիտնոց, մանա-
ւանդ 'ի փառս բանասիրութեան Հա-
յոց, ոչ տայ տեղի կասկածոյ զկարկա-
մութենէ նոցա 'ի ձեռնառութիւն:

Եթէ առ մեզք ոչ արդիւնք լինիցին
խորհուրդք պաճարանաց պիտոյից մե-
րոց, առ յետնովք մերսվք և բնաւ
իսկ ոչ:

Ահա, ընթերցասէր, պատկեր ան-
ցելոց և արդեաց Հայոց 'ի Ճաւա. պատ-
կեր զոյրն և ճշգրիտ. յորում այժմու
պայման նոցա՝ մթագնի 'ի հանդերձն
լոյն թանձր ստուերաց: